Պարույր Սևակ

Մաքսանենգորեն

Դու լսում ես ինձ այնպե՞ս սիրալիր,
Բայց նաև այնպե՞ս-այնպե՞ս անտարբեր,
Ինչպես լսում են աղմուկն անձրևի:
Խոսքերդս ցածր են՝
աղոթքի նման,
Խոսքերդս բարձր են՝
աղոթքի նման,
Որ չի հասնում տեղ
Ու չի կատարվում:
Շաղված աչքերիդ ժպիտի վրա
Գնում-գալիս է քնած մի աստված,
Շուրթերիդ երկու մեծ փակագրծում՝
Մի մեծ առեղծված, որ լուծում չունի...
Իսկ ես խոսում եմ, խոսում եմ, խոսում,
Բայց հիմա ես էլ... ե՛ս ինձ չեմ լսում.
Աչքերիդ շաղված ժպիտի վրա
Արթնացնում եմ մի քնած աստրծու,
Շուրթերիդ երկու մեծ փակագրծում
Մի հին առեղծված առանց քեզ լուծում:
Իսկ դու՝ անտեղյակ, ժպտում ես կրկին
Սիրալի՞ր այնպես,

Բայց և... անտարբե՛ր:

28.II.1963թ.
Երևան